



Ագդաբարուլթեան Trumpet's Sound **փող**

51-րդ ՏԱՐԻ, ԱՆՏՐԱՆԻԱ
ՄԱՐՏ - ԱՊՐԻԼ 2020



«ԱԶԳԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՓՈՎ»
երկամսյա հոգեւոր քերք

Պատասխանատու խմբագիր՝
հովիւ Հրաչ Գույումեան

ACM AUSTRALIA
PO BOX 1593,
CHATSWOOD NSW 2057
EMAIL: hkiujian@acmaust.org
URL: www.acmaust.org



Բովանդակութիւն

COVID-19. Օրհնութի՛ւն, թե՛ անեծք . . . 3

Հովիւ՝ Հրաչ Գույումեան

Սաղմոս 1. 5

Տոն Սրբոմբր

Ոսկէ կանոնը (2) 7

Ռաֆֆի Չախարեան

«Գացէ՛ք Ասոր աշակերտներուն
ըսէք» 10

Վեր Հապիպ Ալաճաճի

Կեանքի ճանապարհիդ
ընտրութիւնը 12

Դաւիթ Տօրօրեան

Աստուծոյ գործը Կիւմրի
քաղաքին մէջ 15

Աշոտ Գիւրճեան

Կազմի նկարը՝ ընտրուած:

Փառաբանութիւն

- Փառաբանեցէ՛ք Տիրոջը ամեն բանի համար, քանի որ Ան բարի է:
- Մենք շնորհակալ ենք, որ այս ամիս եւս կարողացանք շարունակել կարիքաւորներուն սնունդի բաշխումը:

Աղօթք

- COVID-19-ը ամբողջ աշխարհով մէկ տարածուեցաւ, ինչպէս նաեւ Հայաստանի մէջ: Աղօթեցէ՛ք մեր հայրենակիցներուն համար:
- Աղօթեցէ՛ք մեր աշխատակիցներուն համար, որոնք հեռախօսով շարունակ կ'աղօթեն ու կը քաջալերեն կարիքաւոր ընտանիքներուն:
- Աղօթեցէ՛ք, որ առանց խնդիրներու կարողանանք մաքսագերծել ԱՄՆ-էն Հայաստան ուղարկուած ուղղեբեռը:
- Կը խնդրենք աղօթել ծառայութեան համար անհրաժեշտ նիւթական պէտքերուն համար:

Սոյն թերթի ծախսերը կը հոգացուի հաւատացեալներու սրտաբուխ նուէրներով:

COVID-19. Օրհնութի՛ւն, թէ՛ անէծք

«Եւ քու առջեւեղ գացողը նոյն ինքը Տէրն է. անիկա քեզի հետ պիտի ըլլայ. անիկա քեզ պիտի չթողու ու քեզ երեսէ պիտի չձգէ. մի՛ վախճնար ու մի՛ զարհուրիր» (Բ Օր. 31:8):

Պատմութեան եւ մեր կեանքերուն մէջ շատ հետաքրքիր ժամանակներէ կ'անցնինք: Արդեօք այս ամէնը պարզապէս պատահա՞ր է: Ի՞նչ կապ ունի Աստուած COVID-19-ի հետ:

Եթէ մեր Աստուածը Արարիչ Աստուածն է, Ան ամէն ինչի հետ կապ ունի: Ան Տէր չէ, եթէ ամէն ինչի Տէրը չէ: Եթէ Ան բոլորի Աստուածն է, ապա ինչո՞ւ այսքան շատ մահեր ու վախեր կան աշխարհին մէջ:

Այս հարցին կրնանք երկու ձեւով պատասխանել.

1. Աստուածաշունչը շատ յստակ կ'ըսէ, որ վերջին ժամանակներուն մէջ շատ աղէտներ պիտի ըլլան:

Մատթ. 24:6-9-ի մէջ կը կարդանք. «Պիտի լսէք պատերազմներ ու պատերազմներու լուրեր: Զգո՛յշ կեցէ՛ք որ չխռովիք, վասն զի այս ամէնը պէտք է որ ըլլան, բայց դեռ վերջը չէ: Վասն զի ազգ ազգի վրայ պիտի ելլէ ու թագաւորութիւն թագաւորութեան վրայ եւ տեղ տեղ տվեր ու մահտարաժամներ ու երկրաշարժներ պիտի ըլլան: Սակայն ասոնք ցաւերուն սկիզբն են: Այն ատեն ձեզ նեղութեան պիտի մատնեն եւ ձեզ պիտի սպաննեն ու իմ անուանս համար բոլոր ազգերուն ատելի պիտի ըլլաք»:

Այս ամէնը պիտի պատահին, որպէսզի գիտակցինք ճշմարտութիւնը, որպէսզի Իրեն մօտ գանք ու հասկնանք, որ այն ամէնը ինչ գրուած է պէտք է կատարուի:

Նոյի ժամանակները ջրհեղեղը եղաւ, մարդկանց մեղքերու պատճառով Սոդոմն ու Գոմորը կործանուեցան: Շատերը կը նային այսօրուայ իրավիճակներուն ու կը խորհին, թէ Աստուած կը պատժէ իրենց: Ո՛չ. Աստուած կը նախազգուշացնէ մարդկութեանը գալիք բաներու վրայով: Այո՛, պատիժը պիտի գայ եւ փախչելու տեղ պիտի չգտնուի:

2. Մեղքին վարձքը մահ է:

Բոլոր ժողովուրդները, ցեղերը եւ ազգերը գիտեն, թէ ինչ է մեղքը: Անոնք բոլորը հեռացած են Աստուծմէ: Կրօնի մասին խօսիլը արգիւ-
նուած է, հասարակական հաւաքոյթներու ժամանակ աղօթելը արգիւ-
նուած է, Աստուածաշունչ կարդալը արգիւնուած է, մանուկներուն Քրիս-
տոսի մասին սորվեցնելը արգիւնուած է, մեղքի եւ մեղաւոր բնութեան
մասին խօսիլը արգիւնուած է: Աստուծոյ կամ Տէր Յիսուսի հանդէպ
յարգանք չկայ: Ինչպէ՞ս կը զգայիք, եթէ մարդիկ մերժէին ձեզ ու հայ-
հոյէին ձեր անունը:

Բ Տիմ. 3:1-5-ի մէջ կ'ըստի. «Գիտցի՛ր թէ վերջին օրերը չար ժամա-
նակներ պիտի գան. վասն զի մարդիկ պիտի ըլլան անձնասէր, արծա-
թասէր, ամբարտաւան, հպարտ, հայիոյիչ, ծնողներու անհնազանդ, ա-
պերախտ, անսուրբ, անգութ, անհաշտ, բանասարկու, անժուժկալ, դա-
ժանաբարոյ, բարին չսիրող, մատնիչ, յանդուգն, գոռոզ, աւելի հեշտա-
սէր քան թէ աստուածասէր. որոնք աստուածաշատութեան կերպա-
րանքը ունին, բայց անոր զօրութիւնը ուրացած են եւ դուն անոնցմէ
մէկդի՛ կեցիր»:

Աստուածաշունչը շատ լաւ կը նկարագրէ մեր վիճակը եւ թէ որքան
հեռացած ենք Աստուծմէ: Ուրեմն ի՞նչ ըսենք: Արդեօք այս վիրուսը
անէ՞ծք է: Ո՛չ, Աստուած ողորմած ու սիրող է: Ասիկա նախազգուշա-
ցում է՝ օգնելու մեզ գիտակցելու մեր կարիքը. նախազգուշացում՝ օգ-
նելու մեզ ապաշխարութեան գալու: Շնորհքի դուռը լայն բացուած է
բոլոր անոնց, ովքեր Աստուծոյ կուգան՝ Իր մէջ ապաստան գտնելու
համար:

Դուք կրնաք այսօր Քրիստոսով խաղաղութիւն գտնել: Բոլոր անոնք
որոնք ապաշխարութեամբ կուգան Յիսուսի մօտ, Աստուծոյ զաւակներ
կը դառնան:

Այո, COVID-19-ը անէծք է մեղաւորներուն համար ու օրհնութիւն՝ բո-
լոր անոնց, ովքեր ապաշխարութեամբ Իրեն կուգան: Թող Տէրը օգնէ
մեզ բոլորիս, որ հաւատքով Իրեն գանք:

Հ. Գ.



Սաղմոս 1

Առաջին Սաղմոսը կը հակադրէ «Երանելի» մարդը այն մարդու հետ, ով դատաստանի ժամանակ Աստուծոյ առջեւ պիտի չկրնայ կենալ:

Աստուածավախ մարդը

Սաղմոսը կը սկսի «Երանելի» բառով. «Երանելի է այն մարդը, որ ամբարիշտներուն խորհուրդին մէջ չի քալեր»: Երկրորդ Սաղմոսը կը վերջանայ եւս մէկ երանելիով. «Երանի՛ այն ամէնուն, որոնք Անոր կը յուսան»: Աստուածավախ մարդու համար երեք բան ճշմարիտ է.

- Ան ամբարիշտներուն խորհուրդին մէջ չի քալեր:
- Մեղաւորներուն ճամբուն մէջ չի կենար:
- Ծաղր ընողներուն նստած տեղը չի նստիր:

Անաստուած մարդու ցանցը ինկած մարդու ճամբաներուն մէջ անկում կը նկատենք: Ամբարիշտներուն ծուղակին մէջ բռնուելու համար անձը նախ անոնց հետ ճամբայ կ'ելլէ: Յաջորդը, ան անոնց ընկերութեան մէջ կը կենայ, եւ վերջապէս, անոնց հետ կը նստի: Կը նկատենք նաեւ, որ Սաղմոսերգիչի նկարագրած մարդկանց բնատրութիւնը երթալէն աւելի կը վատթարանայ: Ամբարիշտը ինքն իրեն կրնայ լաւ մարդ համարել, աւելի լաւը՝ քան մեղաւորը: Բայց մեղաւորը նոյնպէս կրնայ պնդել, թէ ինքը աւելի լաւ է, քան ծաղր ընողը: Ան գուցէ սխալներ թոյլ տայ, բայց ուրիշի հաւատքը չի ծաղրէր: Բայց Աստուծոյ աչքերուն առջեւ բոլորն ալ մեղաւոր են: Աստուծոյ հանդէպ երկիւղ չունեցող անաստուած մարդու դատաստանի մասին կը կարդանք 6-րդ համարին մէջ:

Աստուածավախ մարդը նկարագրուած է որպէս մէկը, որու հաճութիւնը Տէրոջ օրէնքին մէջ է: Ասիկա կը նշանակէ, որ ան գիտէ Աստուծոյ սուրբ չափանիշները եւ կը ձգտի հնազանդիլ Անոր կամքին: Հետեւաբար ան շարունակ կը խորհրդածէ Աստուծոյ Խօսքի ճշմարտութիւններուն շուրջ՝ թոյլ տալով, որ պատգամը խորունկ արմատ կապէ իր սրտին մէջ:

Աստուծավախ մարդը Աստուծոյ համար պտղաբեր կեանքով կ'ապրի: Անկկա ջուրի ճամբաները տնկուած ծառի պէս է: Երկու բան ճշմարիտ է խոնաութեան կամ ջուրի աղբիւրին մօտ եղող ծառի մը համար. անկկա պտուղ կը բերէ եւ իր տերեւները չեն չորնար: Այսպիսի անձը ինչ բան որ ընէ՝ պիտի յաջողի: Այսպիսի մարդիկ իրենց քրիստոնէական կեանքին մէջ հոգեւոր հարցերու նկատմամբ կենսունակութիւն կը ցուցաբերեն: Քանի որ անոնք շարունակ կը խորհրդածեն Տէրոջ Խօսքին շուրջ, անոնք իրենց Տէրոջը հաւատարիմ ու արգասաբեր ծառաները կ'ըլլան:

Մենք գիտենք, որ միայն մէկ անձ կայ, որու մասին այս նկարագրութիւնը միանգամայն ճշմարիտ է: Մեր Տէր Յիսուսը ամբարիշտներուն խորհուրդին մէջ չքալեց, ոչ ալ մեղաւորներուն ճամբուն մէջ կեցաւ, անոնց անիրաւ գործողութիւններուն հաւանութիւն չտուաւ: Ան չնստաւ ծաղրողներուն հետ՝ անոնց միանալու իրենց ծաղրանքին մէջ: Այնուամենայնիւ, Ան մտաւ լքուած մաքսաւորներու եւ մարմնավաճառներու տունները՝ անոնց փրկութեան պատգամը տալով: Ան անոնց ցոյց տուաւ Աստուծոյ սէրը եւ Աստուծոյ խաղաղութիւնը ունենալու միջոցը: Այսպիսով Ան Իր հետեւորդներուն օրինակ թողեց:

Ամբարիշտը

Սաղմոսերգուն անմիջապէս ցոյց կուտայ, թէ որքան տարբեր են ամբարիշտները: Անկկա զանոնք մէկ կարճ նախադասութեամբ կ'ամփոփէ ըսելով. «Այսպէս չեն...»: Անոնք հաստատուն չեն: Աստուծավախ մարդը ջուրի ճամբաները տնկուած ծառի պէս է, իսկ ամբարիշտը մղեղի պէս՝ զոր հովը կը ցրուէ: Անկկա կայուն չէ եւ մնայուն արժէքներ չունի: «Այսպէս չեն» արտայայտութիւնը կը հակադրէ ամբարիշտ մարդու կեանքը աստուծավախ մարդու կեանքին հետ: Անոնք կը տարբերուին իրենց հետաքրքրութիւններով ու կեանքի պտղաբերութեամբ:

Ապագայի դատաստանի մասին մտածելով սաղմոսերգուն ամբարիշտ մարդկանց համար բարօրութիւն չի կանխատեսէր: Դատաստանի ժամանակ ան պիտի չկրնայ ինքն իրեն պաշտպանել. մեղաւորները պիտի չկրնան կենալ արդարներուն ժողովին մէջ: Ապագային մարդիկ պիտի գտնուին, ովքեր պիտի ըսեն. «Տէ՛ր, Տէ՛ր, չէ՞ որ Քու անունովդ այս կամ այն բանը ըրինք», բայց Տէրը անոնց պիտի պա-

տասխանէ ըսելով, թէ իրենց երբեք չէր ճանչնար: Անոնք պիտի մատնրուին յաւիտենական պատիժին: Հիմա է ժամանակը ապաշխարութեամբ ու հաւատքով Տէրոջը դիմելու: Եթէ այդպէս ընենք մենք վրտահ կրնանք ըլլալ, որ օր մը մաս պիտի կազմենք արդարներուն ժողովին:

Աստուծոյ ամենագիտութիւնը կը հռչակուի: Ան գիտէ թէ՛ արդարներու եւ թէ՛ ամբարիշտներու ճամբան: Ան գիտէ ամբարիշտ մարդկանց ճամբու վերջը: Անոնք իրենց գործերուն պատճառով յաւիտենապէս պիտի կորսուին: Ասիկա չի նշանակէր, որ անոնք գոյութիւն ունենալէ պիտի դադրին, այլ՝ պիտի շարունակեն գոյութիւն ունենալ Աստուծոյ դատաստանին տակ:

Սիրելի՛ բարեկամ, ո՞ր պիտի անցնէք ձեր յաւիտենականութիւնը: Այսօր կրնաք ապաշխարել ու հաւատալ: Վաղը կրնայ շատ ուշ ըլլալ:

Տոն Սթոքմըր

Ոսկէ կանոնը (2)

Մատթէոս 7:13-29

Լեռան քարոզին մէջ Տէրը սորվեցուց Երանելիներու, սպանութեան, շնութեան, ամուսնալուծութեան, սուտ վկայութեան, վրէժի, սիրոյ, տասանորդի, աղօթքի, ծոմապահութեան, երկնային գանձերու, Աստուծոյն մեր կեանքին մէջ նախապատուութիւն տալու, արդար դատաստանի եւ Ոսկէ կանոնի մասին եղած ճշմարտութիւնները: Այժմ, Լեռան քարոզը եզրափակելով (Մատթ. 7:13-29) Ան Իր լսողներուն կը գգուշացնէ ու մարտահրաւէր կը նետէ, որ Իր ուսուցանածը կիրառեն մէջ: Յիսուսը չուզեց, որ մարդիկ պարզապէս լսեն ճշմարտութիւնը, այլ կիրառեն այն իրենց կեանքերուն մէջ: Աստուածաշունչը կը սորվեցնէ մեզի ոչ միայն Խօսքը լսողներ ըլլալ, այլեւ՝ կատարողներ (Յակ. 1:22):

Մինչեւ Յիսուսի գալը մարդիկ լսած ու սորված էին կեղծ, մարդածին կրօնի կամ լայն ճամբայի մասին: Լեռան վրայ Անոր ուսուցանածը կը

տարբերուէր անոնց սորվածներէն: Ան Աստուծոյ կամքին համաձայն սորվեցուց անոնց ճշմարտութիւնը: Ան սորվեցուց նեղ ճամբայի մասին: Հետեւաբար, քարոզի աւարտին Յիսուսը ժողովուրդին մարտահրաւէր նետեց, որպէսզի անոնք սկսին ապրիլ այնպէս ինչպէս Իրմէ սորվեցան եւ մէկդի դնեն փարիսեցիներու ուսմունքը:

Այնուամենայնիւ Յիսուսը չըսաւ, որ եթէ այս բաները ընէք Երկնքի արքայութիւնը կը մտնէք: Ընդհակառակը, փարիսեցիները կը սորվեցնէին, որ եթէ մարդիկ հետեւեն իրենց կեղծ ուսմունքներուն ու մարդածին կրօնին, ապա անոնք Երկինք կը հասնին: Յիսուսը ըսաւ, որ նեղ դռնէն (Յիսուսն է) մտնելով է, որ մարդը կարող է փրկուիլ (Յովհ. 10:9): Փրկութեան այլ ձեւ չկայ (Գործք 4:12): Նախ անձը պէտք է փրկուի՝ ընդունելով Յիսուսին. ասիկա է նեղ դռնէն մտնելը:

Փրկուելէն ետք անձը պէտք է իր բոլոր ջանքերը գործադրէ Լեռան քարոզի ուսմունքին համաձայն կեանք մը ապրելու համար, որը՝ նեղ ճամբան է: Բացի այդ, քանի որ անձը փրկուած է, ան այսպիսի կեանք մը ապրելու կարողութիւնը ունի: Իրականութեան մէջ, գործերը, վարքը եւ Աստուածահաճոյ ապրելակերպը փրկութեան անմիջական արդիւնքներն են: Ահա թէ ինչու Յիսուսը ըսաւ, որ անոնց պտուղներէն պիտի ճանչնաք զանոնք (Մատթ. 7:16ա, 20): Ոչ միայն Լեռան քարոզին մէջ, այլեւ ընդհանուր առմամբ, Աստուածաշունչը կը սորվեցնէ, որ ճշմարտապէս փրկուած անձը պտուղ կը բերէ, որը՝ իր փրկութեան վկայութիւնն է (Յակ. 2:17, 26): Հետեւաբար ես եւ դուք պէտք է մըտնենք նեղ դռնէն եւ ապրենք նեղ ճամբուն համաձայն: Մենք փրկուած ենք Յիսուսին հաւատալով: Փրկուելէն ետք մենք կը հետեւինք Անոր սլատուիրաններուն:

Մարդկանց մարտահրաւէր նետելէ ետք Յիսուսը զգուշացուց անոնց Իր ուսուցումներէն տարբեր ուսուցում սորվեցնողներէն (Մատթ. 7:15): Շատերը պիտի գան Իր անունով, բայց անոնք գայլեր են, եւ անոնց միակ նպատակը Աստուծոյ ժողովուրդին ու Աստուծոյ գործը կործանելն է (Ա Յովհ. 4:1): Աստուածաշունչը շատ նախազգուշացումներ ունի մեզի համար: Տարբեր եզրոյթներ եւ օրինակներ կան Աստուծոյ Խօսքին մէջ, որոնց միջոցով Աստուած մեզ կը նախազգուշացնէ նման մարդոցմէ. կեղծ եղբայրներ (Բ Կորնթ. 11:26), կեղծ առաքեալներ (Բ Կորնթ. 11:13), կեղծ ուսուցիչներ (Բ Պետ. 2:1):

Ինչպէ՞ս ճանչնանք եւ զգուշանանք նման մարդոցմէ: Կայ միայն մէկ կերպ. Ճշմարտութիւնը, Աստուծոյ Խօսքը, Աստուածաշունչը ճանչնալով: Երբ ես եւ դուք գիտենք Աստուածաշունչը, ապա կը կարողանանք ստուգել մարդկանց պտուղները եւ իմանալ, թէ արդեօք անոնք կե՞ղծ են, սո՞ւտ են, խաբո՞ղ են (Մատթ. 7:20):

Դժբախտաբար կեղծ ուսուցիչներու, առաքեալներու եւ մարգարէներու մեծ բանակ կայ, եւ ասոր պատճառն այն է, որ միշտ կը գրտնըռնին մարդիկ, ովքեր ոչ թէ ճշմարտութիւնը կը փնտռեն, այլ իրենց ականջներուն համար հաճելի վարդապետութիւն (Բ Տիմ. 4:3-4):

Հետեւաբար, մենք պէտք է զգոն եւ աշալուրջ ըլլանք, քանի որ հակառակորդը ոչխարներու հանդերձանքով կը մօտենայ, որպէսզի կործանէ մեզ (Բ Կորնթ. 11:14): Մենք պէտք է զգոյշ ըլլանք նոյնիսկ այն ժամանակ, երբ անձը կ'ըսէ. «Տէ՛ր, Տէ՛ր»: Անոնք գուցէ օգտագործեն Յիսուսի անունը ու ըսեն, թէ փրկուած են, բայց իրականութեան մէջ անոնք չեն ապրիր Աստուածաշունչին համաձայն կեանքեր: Շատերը կը պնդեն, թէ քրիստոնէայ են, փրկուած են, Յիսուսին ու Աստուածաշունչին կը հաւատան, բայց չեն ապրիր քրիստոնէական կեանքը: Յիսուսը կը նախազգուշացնէ մեզի, որ զգոյշ ըլլանք այդպիսի մարդոցմէ ու անոնցմէ հեռու մնանք: Դժբախտաբար, այդպիսի մարդիկ կը մնան եկեղեցիներուն մէջ, ճշմարիտ հաւատացեալներու կողքին՝ ձեւացնելով, թէ Աստուծոյ կը պատկանին, բայց երբ դատաստանի օրը գայ, Յիսուսը անոնց պիտի ըսէ. «Մէկդի գացէ՛ք Ինձմէ՛»: Որոմի առակին մէջ (Մատթ. 13:24-30) անոնք դատաւարտութեան մատնուեցան:

Վերջապէս, Յիսուսը կ'աւարտէ Իր ուսուցումը՝ ներկայացնելով երկու կառոյցներ: Առաջին տան հիմքը հաստատուն ու անշարժ վէմ էր, որուն վրայ խելացի մարդը երկնքի ու երկրի Արարիչ, մեծ ճարտարապետի ուղեցոյցին համաձայն կառուցեց իր տունը: Երբ անձը կը հետեւի Լեռան քարոզի ուսմունքին, եւ ընդհանուր առմամբ Աստուածաշունչի պատուէրներուն, ապա իր կառոյցը յաւիտենապէս կանգուն կը մնայ: Երկրորդ տան հիմքը շատ մակերեսային ու անկայուն էր: Ով իր տունը այսպիսի հիմքի մը վրայ կը կառուցէ, նման է անխելք մարդու մը, քանի որ ան չի հետեւիր մեծ ճարտարապետի ուղեցոյցին: Երբ անձը չի հետեւիր Լեռան քարոզի ուսմունքին եւ առհասարակ՝

Աստուածաշունչին, ապա իր կառուցածը յաւիտեան կանգուն չի մնար, այն կը կործանուի:

Մենք գիտակցենք թէ ոչ՝ շինարարներ ենք: Մենք մեր հոգեւոր տաճարը կը կառուցենք այս երկու հիմքերէն մէկուն վրայ. կա՛մ կը կառուցենք հաստատուն վեմի վրայ, որը Յիսուս Քրիստոսն է, եւ որը մեզ կը հասցնէ մինչեւ յաւիտենական կեանք, կա՛մ մեր անձնական արդարութեանը ապաւինելով, մարդածին վարդապետութեանը յարելով, Աստուածաշունչին մասին սխալ պատկերացում ունենալով, մեր տաճարը կը կառուցենք անկայի վրայ, եւ որը կը հասցնէ մեզ կործանման ու դժոխքին: Ինչպիսի՞ շինարար էք դուք: Ո՞ր հիմքի վրայ կը կառուցէք ձեր հոգեւոր տաճարը: Մենք պէտք է վստահ ըլլանք, որ խելացի մարդու պէս կը վարուինք ու մեր յաւիտենական կեանքը ձեռք բերելու համար մեր տունը կը կառուցենք միակ հիմքի, հաստատուն վեմի՝ Յիսուս Քրիստոսի վրայ:

Երբ Յիսուսը ասարտեց Իր ուսուցումը, մարդիկ զարմացան Իր խօսքերու վրայ, քանի որ Ան իշխանութեամբ կը սորվեցնէր եւ ոչ թէ այդ օրերու դպիրներուն ու փարիսեցիներուն պէս:

Ռաֆֆի Չափարեան



«Գացէ՛ք Անոր աշակերտներուն ըսէք»

«Գացէ՛ք Իմ եղբայրներուս ըսէք»

Թէ՛ հրեշտակը եւ թէ՛ Յիսուս պատուէր կուտան կանուխէն գերեզման գացող կիներուն, որ երթան աշակերտներուն ըսեն, պատմեն եւ տեղեկացնեն ինչ որ տեսան ու լսեցին: Կիները չորկուեցան քահանայապետներուն ոչ ալ Պիղատոսին, այլ Յիսուսի աշակերտներուն: Յարութեան առաջին օրուան պատգամը թէւ բոլոր մարդկութեան է, սակայն յատկապէս ուղղուած էր աշակերտներուն:

Պարապ գերեզմանին քով նստած հրեշտակը եւ Յիսուս՝ դրկեցին կիները աշակերտներուն:

- **Որպէսզի անոնք ԳԻՏՆԱՆ թէ Յիսուս յարութիւն առած է:** Աշակերտները գիտէին թէ վերջին օրերուն Յիսուս չարչարուած, խաչուած, մեռած ու թաղուած էր. սակայն չէին գիտեր թէ Տէր Յիսուս յարութիւն առած է: Աստուծոյ Խօսքին եւ ճշմարտութիւններուն գիտութիւնը առանց յարութեան գիտութեան եւ հաւատքին արժէք չունի: Այսօր շատ են անոնք որ կը խորհին թէ գիտեն Աստուածաշունչը եւ կ'ուզեն զայն ուրիշներուն սորվեցնել առանց հաւատացած եւ ընդունած ըլլալու: Քրիստոսի մարմինով մեռելներէն յարութիւն առած ըլլալուն:
- **Որպէս զի անոնք ՄԵԻԹԱՐՈՒԻՆ:** Աշակերտներուն ունեցած ցաւն ու վիշտը միայն մէկ բան կրնար փարատել. այդ ալ Յիսուսի յարութիւնը: Նոյնպէս ալ մենք այսօր մեր շատ մը անմխիթար կորուստներուն մէջ կրնանք մխիթարութիւն գտնել Յիսուսի յարութեան մէջ, վստահ ըլլալով Յիսուսի խօսքերուն թէ քանի որ Ինք կ'ապրի՝ մենք ալ պիտի ապրինք: Մեր սուգի եւ տառապանքի տխուր պահերուն յիշենք Տէրոջը խոստումները:
- **Որպէս զի ՈՒՐԱՆԱՆԱՆ:** Յիսուսի բացակայութիւնը աշակերտները դառնապէս տխրեցուցած էր: Իրենց բարեկամը, ուսուցիչը, առաջնորդը իրենց հետ չէր: Ինչպէ՞ս կրնային ուրախ ըլլալ, ի՞նչը կրնար զիրենք ուրախացնել: Միայն մէկ պատգամ՝ թէ Անիկա ողջ է ու կ'ապրի:

Սիրելի Աստուծոյ զաւակ, պարագաներդ որչափ ալ դժուար ըլլան ու կացութիւնդ տխուր, մութ եւ անորոշ, միտքդ բեր որ Փրկիչդ կ'ապրի:

Վեր. Հապիպ Ալաճաճի

Քաղուած՝ «Հոգեւոր խորհրդածութիւններու կաթիլներ» գրքէն



Կեանքի ճանապարհիդ ընտրութիւնը. նե՞ղ, թե՞ լայն

Մատթէոս 7:13-14, Բ Օրինաց 30:16-19

Բ Օրինաց գրքին 30:19-րդ համարին մէջ Աստուած Իսրայէլի Ժողովուրդին կը պատուիրէ, «... Ուրեմն կեանքը ընտրէ, որպէսզի ապրիս դուն եւ քու սերունդդ»: Աստուած Իսրայէլի ժողովուրդին ազատութիւն շնորհեց ընտրութիւն ընելու: Եթէ հնազանդին Իր խօսքերուն ու պատուիրանքները պահեն, պիտի օրհնուին, ապրին, շատնան ու ժառանգեն այն երկիրը գոր Տէրը խոստացաւ տալ իրենց:

Տէրը մեզի ալ այդ ազատութիւնը շնորհած է որ ընտրենք՝ կա՛մ յաւիտենական կեանքը եւ կա՛մ յաւիտենական կորուստը: Մարդկօրէն գիտենք, որ ֆիզիկական կեանքը շատ կարեւոր է մեզի համար: Եթէ անձի մը կեանքը վտանգուած է որեւէ կերպով, կը տեսնենք կամ կը լսենք թէ մարդիկ ի՛նչ մեծ ջանքեր կը թափեն եւ մեծ ծախսեր կ'ընեն կեանք մը փրկելու համար: Միայն յուսահատներն են, որ կ'ուզեն իրենց կեանքերուն վերջ տալ անձնասպանութեամբ: Կրնայ ըլլալ որ այսպիսիներէն ոմանք կամ անբուժելի հիւանդութեան մը գոհը դարձած են կամ ալ նիւթական մեծ կորուստ ունեցած են:

Կեանքը շատ կարեւոր է բոլորիս համար: Լուրերէն միշտ կը լսենք, թէ ինչպէս մարդիկ կը ջանան կորսուած անձիք գտնել: Մայր մը իր փոքրիկ տղեկը կորսնցուցած էր եւ տասնեակ խումբեր փնտռտուքի ելլելով օր մը ետք փոքրիկ տղեկը իր շնիկին հետ սառած կը գտնեն: Ի՛նչ ուրախութիւն կ'ըլլայ այդ ընտանիքին երբ տղեկը եւ իր շնիկը կը վերագտնեն իրենց կեանքը: Ուրիշ մանուկ մը, հազիւ մէկուկէս տարեկան, երբ կը խաղար, յանկարծ կ'իյնայ նեղ ու խորունկ հորի մը մէջ: Հարիւրաւոր անձիք կը փութան այլազան մեքենաներով օգնութեան հասնիլ՝ ազատելու մանուկին կեանքը: Այդ մանուկին կեանքի փրկագինը մօտաւրապէս կ'արժէ 250,000 տոլար: Ժամեր ետք մանուկը կ'ազատեն եւ ինչ մեծ ուրախութիւն կ'ըլլայ անոր ընտանիքին:

Եթէ մահկանացու այս ֆիզիկական կեանքը այսքան կարեւոր է,

հապա որքա՞ն կարելու է մեր հոգևոր կեանքերը: Ինչպես մարդիկ կը ջանան իրենց լուսագոյնը ընել ֆիզիկական կեանք մը ազատելու համար՝ որքա՞ն անելիով մեր լուսագոյնը ընելու ենք մեր հոգևոր կեանքերը ողջ պահելու համար: Աստուած ըսաւ. «Կուգե՞ս ապրիլ, ընտրե՛ կեանքը»: Այս աշխարհի կեանքը որքան ալ երկար ապրինք՝ օր մը պիտի մեռնինք: Աստուած թէ՛ Հին Կտակարանին մէջ, թէ՛ Նոր Կտակարանին մէջ խօսեցաւ մեզի, որ երկրային կեանքը կարճ է, բայց յաւիտենական կեանք մը կայ, որ անվերջ ու անսահման է: Որեմն ինչ որոշում որ առնենք այս աշխարհի վրայ, պիտի ազդէ թէ ուր պիտի անցնենք մեր յաւիտենականութիւնը: Որոշում պէտք է առնենք թէ ո՞ր ճամբէն պիտի երթանք՝ նե՞ղ թե՞ լայն: Երբ Միգուրիի Միսիսիի գետը կը դիտեմ, կը տեսնեմ, թէ եթէ մէկը լողալ ուզէ հոսանքին ուղղութեամբ, բնաւ ջանք թափելու պէտք չունի, ինքնաբերաբար հոսանքը զինք կը տանի, բայց դէպի ո՞ր, դէպի վար: Իսկ եթէ ջանայ հոսանքին դէմ լողալ պէտք է պայքարի, բոլոր ունեցած ուժը պէտք է գործածէ, որ յառաջ երթայ: Հոսանքին հետ ընթանալ շատ դիւրին է, սակայն Յիսուս կ'ըսէ. «Եթէ կ'ուզէք կեանք ունենալ նեղ դռնէն մտէք»: Յիսուս նաեւ կ'ըսէ. «Կուգե՞ս Իմ աշակերտս ըլլայ, պէտք է խաչդ կրես»: Այնքան ատեն որ այս աշխարհի վրայ կ'ապրինք, հոգ, նեղութիւն, տառապանք պակաս պիտի չ'ըլլան, սակայն Տէրը խոստացաւ մեզի, որ Ինք մեզ հետ պիտի ըլլայ: Եթէ կ'ուզենք, որ Յիսուս օգնէ մեզի, Իր խօսքը պէտք է կատարենք: Աստուծոյ Խօսքը իմանալ լաւ է, բայց բաւարար չէ, պէտք է կատարենք զայն: Միգուրիին, Մ. Թուէին նշանաւոր գրողը ըսած է. «Ես չեմ վախճար Սուրբ Գիրքին մէջ չգիտցածէս, բայց կը վախճամ երբ չեմ կատարեր այն ինչ որ գիտեմ»: Աստուած Բ Օր, 30:19-ին մէջ ըսաւ. «Քու առջեդ դրած եմ կեանքն ու մահը, օրհնութիւնն ու անեծքը, ուրեմն կեանքը ընտրե՛ որպէսզի ապրիս դուն և քու սերունդդ»: Դուն պիտի առնես այդ որոշումը քու անձիդ համար, ո՛չ ուրիշը, եւ երբ շիտակ որոշում կ'առնես՝ ոչ թէ միայն դուն կ'օրհնուիս, այլ քու ընտանիքդ ու քու պարագաներդ ալ:

Ծնողները պէտք է բարի օրինակ ըլլան իրենց զաւակներուն Տիրոջը ճամբան ընտրելով, իրենց հաւատքին հիմը հաստատ վէմի վրայ դնելով, որպէսզի կեանքի փոթորիկներէն ազդուելով չփլին: Ինչպէս կը լսենք լուրերուն մէջ, թէ տուներ կը փլին փոթորիկներէ կամ անձրեւներէ, որովհետեւ հաստատ հիմք չունին, նոյնը կ'ըսուի մեզի Մատթ.

7:24-27-ին մէջ: Երկու տեսակ տուներ կան. մէկը հաստատ ժայռի վրայ շինուած է, միւսը՝ աւազի վրայ: Երբ մէկը տուն կը շինէ կարելոր է թէ ինչ տեսակ հիմք կը դնէ այդ տան: Եթէ հիմքը զօրաւոր չէ, փոթորիկը, անձրեւը կը փլէ տունը ու մեծ կործանում կ'ըլլայ: Իսկ եթէ տուն մը հաստատ հիմք ունի, ժայռի վրայ է, ինչ փոթորիկ ալ գայ չ'ազդուիր, այլ հաստատ ու կանգուն կը մնայ: Մեր յաւիտենական կեանքը այդպէս է: Եթէ մեր հիմքը ժայռին՝ Յիսուս Քրիստոսի վրայ է, եւ մեր հատուցին մէջ հաստատ մնանք, ինչ ալ պատահի գիտենք որ մեզի համար բարի է: Շատեր լայն ու դիրքին ճամբայէն կ'երթան, բայց վերջաւորութիւնը յաւիտենական կորուստ է: Քիչուոր են մեղ ճամբայէն գացողները, սակայն անոնք կեանք պիտի գտնեն:

Աստուած ազատութիւն տուած է մեզի ընտրութիւն ընելու: Աղօթքս է, որ Տէրը մեզ բոլորս ալ առաջնորդէ որ որոշապէս գիտնանք թէ ո՞ր ճամբայէն կը քալենք: Պօղոս առաքեալ Կողոսայի եղբայրներուն ըսաւ. «Դեմաս եւ Դուկաս ձեզի բարեւ կը դրկեն», եւ ուրիշ անգամ ըսաւ. «Բայց Դեմաս զիս ձգեց եւ աշխարհ գնաց»: Եթէ Քրիստոսի հետ երթալու որոշումը առած ես, վստահ եղիր որ Ան քեզի հետ պիտի երթայ մինչև որ այդ օրինեալ վայրը հասնիս:

Դաւիթ Տօթթօրեան

Քաղուած՝ «Հատընտիր հոգեւոր պատգամներ» գիրքէն

Կարելոր յայտարարութիւն

Աստրալիական տոլարի շարունակական անկումը Ամերիկեան տոլարի նկատմամբ ստիպեց մեզ նիւթական որոշ խնդիրներու բախվել, որոնց պատճառով հարկադրուեցանք կրճատել ծառայութեան ծախսերու որոշ մասը: Քանի որ չուզեցինք կրճատել Հայաստանի կարիքաւորներուն տրամադրուած սնունդն ու այլ տեսակի աջակցութիւնը, որոշեցինք վերանայել մեր միւս ծախսերուն: Ատոնցմէ մէկը այս թերթի փօստի ծախսն է: Այլեւս գուցէ դադարեցնենք Արեւմտահայերէն ամսագրի փօստով ուղարկելը: Կը խնդրենք աղօթել, որ Տէրը բարեւալէ մեր նիւթական վիճակը: Դուք կրնաք առցանց կարդալ ամսագիրը հետեւեալ կայքէջէն՝ www.acmaust.org/help/trumpet-sound-magazine:

Աստուծոյ գործը Կիւմրի քաղաքին մէջ

Կը փափաքիմ ձեզի հետ կիսուիլ Աստուծոյ կատարած գործերուն մասին Կիւմրի քաղաքին եւ անոր շրջակայ տարածքներուն մէջ, որտեղ ես եւ ընտանիքս կը ծառայենք Հայ քրիստոնէական առաքելութեան (ACM) հետ: Երբ մէկուկէս տարի առաջ առաջին անգամ սկսեցինք մեր ծառայութիւնը այստեղ՝ քաղաքի ու համայնքի մասին մեր պատկերացումները բոլորովին այլ էր:

Սկիզբը Կիւմրին շատ տարօրինակ կը թուար ինչպէս կնոջս, այնպէս ալ ինձի եւ նոյնիսկ մեր փոքրիկ աղջնակի համար, ով այդ ժամանակ ընդամէնը 2.5 տարեկան էր: Չնայած մեր հայրենակիցներուն մէջ կը գտնուէինք, սակայն տարբեր մտածելակերպի ու սովորութիւններու ականատես եղանք: Եւ պէտք է խոստովանիմ, որ շրջակայ միջավայրին անծանօթ ըլլալու պատճառով դժուար էր ծառայութիւնը սկսիլ: Կիւմրի ժամանելէն առաջ մեզ ըստած էր, որ այստեղ շատ բարեպաշտ հաւատացեալներ կան, եւ նաեւ խումբ մը մարդիկ, որոնց կրնանք ծառայել: Համաձայն եմ, որ կար խումբ մը մարդիկ, որոնց կրնայինք ծառայել, սակայն անոնցմէ հոգեւոր շատ բան չէինք կրնար ակնկալել: Այս ընթացքին մէջ մենք շարունակ կ'աղօթէինք մեր կեանքի ու ծառայութեան համար Աստուծմէ զօրութիւն ու առաջնորդութիւն ստանալու համար: Գիտեմ, որ շատերը նոյնպէս աղօթած են եւ կը շարունակեն աղօթել այս կարեւոր ծառայութեան եւ մեզ համար: Ան Իր զուակներուն կը պահէ բոլոր պարագաներուն մէջ: Մենք քաջ կը գիտակցինք, որ առանց Տէր Յիսուս Քրիստոսի ոչինչ կրնանք ընել: Մեր ծառայութեան մէջ մեզի կ'օգնեն մեր եղբայրներն ու քոյրերը Երեւանէն, Կիւմրիէն, ինչպէս նաեւ հեռաւոր երկիրներէն: Իրենց աղօթքներով, քաջալերանքներով եւ այցելութիւններով անոնք պատերազմակից են մեզի հետ այս կարեւոր գործին մէջ, որուն Աստուծոյ կանչեց մեզ:

Մօտաւորապէս մէկ տարի առաջ Կիւմրիի մէջ մարդիկ շատ ուշադիր կը հետեւէին մեզի, նոյնիսկ, երբ փողոցը կ'ըլլայինք: Լսեցի, որ մեր դրացիները իրար կը հարցնէին, թէ ովքե՞ր ենք եւ ի՞նչ կ'ընենք այստեղ: Ժամանակի ընթացքին, չնայած մարդիկ կը շարունակէին զգու-

շանալ մեզմէ, բայց անոնցմէ շատերը սկսեցին մօտիկութիւն ցուցաբերել: Մենք կը ձգտէինք լաւ վկայութիւն թողնել թաղամասին մէջ, եւ այդպիսով, հնարաւորութիւն ունենալ շատ մարդկանց Աւետարանը հասցնելու:

Խօսելով օրհնութիւններու մասին, կրնամ ըսել, թէ Աստուած օրհնեց մեզ, եւ մեր դրացիներէն ոմանք սկսեցին յաճախել Սուրբգորոց սերտողութիւններուն եւ նոյնիսկ իրենց օգնութիւնը առաջարկել: Մենք հիմա աւելի լաւ կը ճանչնանք Կիւմրին եւ ժողովուրդին եւ անոնց կ'ընդունինք այնպէս, ինչպէս որ կ'ան: Իհարկէ, Աստուած մեզ կ'օգնէ այս ամէնուն մէջ: Մենք սորվեցանք թեթեւ նայիլ որոշ իրավիճակներու եւ չշփոթուիլ, այլ վստահիլ այն հօգօր Տէրոջը, ով կը սիրէ մեզ: Նոր մարդիկ, ովքեր առաջ չէին մասնակցեր եկեղեցական ժողովներուն միացան մեր ժողովներուն եւ ասիկա մեզի մեծ ուրախութիւն եւ քաջալերութիւն պատճառեց: Մենք սկսեցինք վայելել անոնց սէրը՝ Աստուծոյ ու մեր նկատմամբ:

Վերջերս ընտանիքներէն լսեցինք որոշ վկայութիւններ, թէ ինչպէս Աստուած այցելած է իրենց՝ ACM-ի եղբայրներու եւ քոյրերու միջոցով: Անոնք տեսան, որ Աստուած իրենց հանդէպ Իր սէրը կը յայտնէ Իր զաւակներուն միջոցով: Մինչ այդ, այս ընտանիքները շատ զայրացած էին ու նեղուած էին կեանքէն ու կ'ապրէին դառնութիւն ունենալով իրենց սրտերուն մէջ: Այժմ անոնց կեանքը փոխուած է ոչ միայն նիւթական օգնութեան շնորհիւ, այլ Աստուծոյ Խօսքի շնորհիւ: Այս վկայութիւնները մեզի համար օրհնութիւն են, եւ մենք կ'ուզենք շարունակել Աստուծոյ գործը. մենք կը հաւատանք, որ պիտի տեսնենք շատ պտուղներ: Շնորհակալութիւն կը յայտնենք Աստուծոյ՝ ACM-ի ծառայութեան եւ Իր հաւատարիմ զաւակներուն համար, ովքեր սիրեցին ու ծառայեցին այդ անտեսուած մարդկանց ու անոնց կարեւորութիւն տուին՝ որպէս Աստուծոյ թանկագին արարածներ: Սիրելիներ, մենք կը վայելենք ձեր պտուղները եւ կը փափաքինք աւելի շատ պտուղ բերել Աստուծոյ փառքին համար: Կը խնդրենք շարունակեցէ՛ք աղօթել, որպէսզի կարողանանք նոր մարդկանց հասնել:

«Ուստի, իմ սիրելի եղբայրներս, հաստատո՛ւն եւ անշա՛րժ կեցէ՛ք եւ ամէն ատեն աւելցէ՛ք Տէրոջը գործին մէջ, գիտնալով թէ ձեր աշխատութիւնը պարապ չ'է Տէրոջմով» (Ա Կորնթ. 15:58):

Աշոտ Գիրճեան